«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխում (հայտարարություն)

2024 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ն իրականացնում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի սովորական (հասարակ), անվանական բաժնետոմսերի տեղաբաշխում:

- Թողարկող՝ «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ:
- Տեղաբաշխող՝ «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ:
- Արժեթղթերի տեսակը՝ Սովորական (հասարակ) բաժնետոմս:
- Արժեթղթերի ձևը՝ Ոչ փաստաթղթային:
- Արժեթղթերի քանակը՝ 3,850,000 հատ:
- Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը՝ 400 ՀՀ դրամ:
- Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝ 1,540,000,000 ՀՀ դրամ:
- Մեկ ներդրողի համար ներդրման սահմանաչափերը՝ նվազագույնը՝ 10 հատ, առավելագույնը՝ 500 000 հատ:

Ներդրողները ազդագրի տպագիր տարբերակը կարող են ձեռք բերել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գլխամասային գրասենյակում (հասցե՝ ՀՀ, 0033 Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ), իսկ էլեկտրոնային տարբերակը՝ telcell.am կամ invest.telcell.am կայքերից: Ազդագիրը հրապարակված է, կարող եք տեսնել ստորև.